

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՐԵԿԱՑՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Նարեկացու ստեղծագործութեան բովանդակութեան միանգամայն համապատասխան պոէտիկական հնարան քննելից մէկն էլ հակադրութիւններն են: Իբրեւ հանձարեղ բանաստեղծ Նարեկացին՝ ինչպէս զբամասուրգիայի քնազաւառում Շեքսպիրը, լիբիկական պոէմում իր՝ իբրեւ մարդու ներքին աշխարհը ներկայացնում է յաճախ իրար հակասող երկու կողմերի անընդհատ պայքարում, որով և պայմանաւորում է խոհերի և զգացմունքների շարժումն ու առաջընթացը: Դրականի և բացասականի հակադրութիւնների անվերջ մի շարք անցնում է պոէմով մինչև հակասութիւնների լուծումը, մինչև կողմերից մէկի յաղթանակը:

Քանի որ Նարեկի բովանդակութեան զարգացման մղիչ ուժը պայքարն է, ապա դա արտայայտելու համար բնականաբար պէտք է շատ մեծ տեղ բռնէին այդտեղ բանաստեղծական հակադրութիւնները: Նարեկացին իրեն յատուկ բեղունութիւնը և գիտերի ահազին կարողութիւնը այս դէպքում ևս լի ու լի հանդէս է բերում. նա կարողանում է գտնել անհաշիւ քանակութեամբ հակադիր դրութիւններ, գաղափարներ կամ զգացմունքներ արտայայտող բառեր ու արտայայտութիւններ և գնել կողք կողքի: Որքան բնորոշ է, օրինակ, հետևեալ հատուածը.

Այլ ես անպիտան յամեցայնի,
Եւ որքան բան զօր է պարսաւեալս,
Որ մինչդեռ արբունս եմ՝ ճիւղեմ,
Մինչդեռ զգաս երեւիմ՝ քմբիմ,
Ի բարեպաշտելս իմում գայրակիլիմ,
Մինչդեռ ալօրեմս՝ եւ վրիպիմ,
Ի յընթանալս իմում՝ եւ կասիմ,
Յարգարանալս իմ՝ եւ մեղանչեմ,
Ի խաղաղանալս իմում ամբոխիմ:

(Բան ՀԱ. — Բ.)

Այսպէս՝ բանաստեղծի հոգին խաղաղուելու պահին իսկ վրդովւում է. բայց կարող է և երկուութիւնը միս ծալից սկսել, այսինքն հոգին վրդովուելու պահին իսկ խաղաղուել: Նոյնը և միս դրութիւնները:

Շատ են և այնպիսի դէպքեր, երբ նարեկացին զբականի և բացասականի միաժամանակ գոյութիւնն ու նրանց միջև եղած հակասութիւնը բացայայտում է իրեն և լսածուն կամ Բրիտտոսին զանազան բաղձաթիւ առումներով հանդիպողերով: Օրինակ՝ մի տեղ գրվելով Բրիտտոսին, ասում է.

Որ ինձ անհնարն է, քեզ դիւրին է,
Որ ինձ անհասն է, քեզ սահմանեալն է,
Որ ինձ անանցն է, քեզ հալաւոր է,
Որ եղիկելոյս ինձ ծածկեցեալն է, քուդ
Երանուրեան մեծաւոր է:

(Բան ՆԷ. — Ա.)

Գեղարուեստական ներգործութեան մեծ ապէս նպաստում են նաև «Մատան Ողբերգութեան» պոէմի տաղաչափական հարուստ կառուցուածքը և լիզուր խորօրինակ ոճաւորութիւնն ու երանգաւորութիւնը:

Ամենից առաջ պէտք է ասել, որ ոչ մի վէճ չի կարող լինել Նարեկի չափածոյ լինելու մասին, մի բան, որն սպասուի կերպով ապացուցել է Մ. Արեղեանը: Մինչև հիմա, այդ գրքի տողատուած հրատարակութիւն չի եղել (*), չնայած բանաստեղծի՝ շատ անգամ ասած այն որոշակի խօսքերին, ըստ որոնց նա իր ողբերը չափածոյ է գրել («Եւ գինչ է ինձ սակաւս և նուազագոյնս յօդել սահմանս կսկծելիս չափաբեականս, մինչ անցեալ է ըստ քանակութիւն և վրիպեալ ըստ բժշկութիւն») (Բան Ա. — Գ.): Նարեկացին իր պոէմում ոտանաւորի տարբեր չափերի գործածութեան մի գարմանալի բաղձադանութիւն է հանդէս բերել. հայ գրականութեան մէջ առանձին վերցրած որեւէ չափածոյ գրուածք այդ տեսակէտից չի կարող համեմատուել նրա գործի հետ: Այդ բաղձադանութիւնը պատմականօրէն

(*) Այս աշխատանքը հմտօրէն կատարեց Կ. Պոլսոյ հայոց Պատրիարք Գարեգին Արքեպս., իր հոյակապ աւտուժնասիրական հրատարակութեամբ 1948/ին. Խմբ.

չատ նշանակալից է, եթէ նկատի առնենք, մանաւանդ, որ Նարեկացուց երկու դար յետոյ՝ նոյնիսկ Ներսէս Շնորհալին իր պոէմ-ները իրենց հազարներ չհասնող տողերով սկզբից մինչև վերջ գրել է նոյն չափով։

Գործածուող չափերի բազմազանութիւնը և յաճախակի փոփոխութիւնը Նարեկում, ի հարկէ, բանաստեղծի քմահաճոյքի կամ ձեապաշտական հակումների արդիւնք չեն։ ոչ ոք մեր միջնադարի գրականութեան պատմութեան մէջ Նարեկացու չափ ձևի գեղեցկութեան զգացողութիւն և ըմբռնողութիւն հանդէս չի բերել, հետեաբար, գուցէ և ոչ ոք նրա չափ գերծ չի ձեապաշտական գայթակղութիւններից։ Ռոմանտիկ չափի գեղեցկութեան ըմբռնումը Նարեկում զուգակցուած է բովանդակութեան հետ. Նարեկացու համար միշտ այն չափն է նախընտրելի, որի կիրառութեամբ չի ճնշուում, այլ ազատ արտայայտութիւն է գտնուում բովանդակութիւնը։ Նա ոչ մի գէպքում չի զոհաբերում բովանդակութիւնը, չի կաշկանդում իրեն առանձին չափական շրջանակներով։ Այլ կերպ Նարեկը գեղարուեստական տեսակէտից չափազանց կը տուժէր, որովհետեւ այն մեծ և ուժեղ ներքին դրաման, որ ապրում է բանաստեղծը, այն անընդհատ փոթորկոտ աշխարհութիւնների ենթակայ հոգին երբեք չէին կարող միապաղաղ սրիթական-երաժըշտական արտայայտութիւն ստանալ։

Նարեկը գրուած է մեծ մասամբ ազատ ռոմանտիկներով. բանաստեղծը խառը գործածել է համարեա այն բոլոր ռոմանտիկ չափերը, որոնք յատուկ են հայերէն լեզուին, ըստ որում դրանցից չափերը՝ առանձին անգամ ինքը։

Բայց ինչպէս երաժշտական մեծ ստեղծագործութիւններում, այնպէս էլ Նարեկը, չնայած իր բոլոր ելնէջներին, խողովեան համար մի միասնական ձայնական պատկեր է կազմում. նա ունի իր լէյտամոտիվը, որը կապում է մնացած մասերը իրար և ամբողջացնում՝ ուժեղ հետք թողնելով յիշողութեան մէջ։ Այդ մոտիվը առաջանում է նրանից, որ նրա խառը ռոմանտիկների կառուցուածքի մէջ իշխում են յամբ-անապետեան հնգաժանկ անդամները։ Հնգաժանկ անդամներով ռոմանտիկը Նարեկում

երբեմն գործածուած է մաքուր ձեռք՝ կազմելով յամբ-անապետեան երկանգամ 10 ժանկանի, եռանգամ 15 ժանկանի և քառանգամ 20 ժանկանի ռոմանտիկներ։ Այս երեք տեսակի ռոմանտիկներն էլ, որոնք առաջին անգամ հանդիպում են Նարեկացու մօտ, հայերէնի ամենաներածշտական ռոմանտիկներից են, և Նարեկում երբեմն ամբողջական հատուածներ են յօրինուած դրանցով։ Սրանցից ամէն մէկի համար մի-մի օրինակ բերենք.

1) 5 — 5

Եւ արդ ջուր կամաց / եւ կար արժատուաց՝
Բեկուրեամբ հոգւոյս / մնացս լմամբ՝
Խորակամբ արժիս / հեղեղ առաջի,
Զմարգարէին / յիշեցուցանեմ ...

(Քան ԶԸ. — Ս.)

Այս չափով են պոէմի գլուխների կրկնուող վերնագրերը.

Ի խորոց արից / խօսք ընդ Ասուծոյ.

2) 5 — 5 — 5

Պարտուցն մխտալ / ճաղանդացն՝ նեպով /
մեծաւ ի սուծի,
Եւ ապիկար / մասնեալ անարժան / զոր-
ծովս յիւաւի,
Վասնիչ արբուցի / զանձուց կրկնադաս / եւ
անբախելի,
Պատասխանասու / մեծին ըմբոնեալ / ան-
հրաժարելի ...

(Քան ԻԶ. — Բ.)

3) 5 — 5 — 5 — 5

Աւաղս ձայնից / լուցանողաց // ի վողս
ճնչոյս / խոսոս հնչի,
Բազմահասուած / ետրիւն բնութեանս //
ներհակ միմեանց / ի պատերազմի,
Երկչոսութեամբ / կարծեաց վարանեալ //
ամենայնիւ կայ / ի վճանգի:

(Քան ԻԶ. — Գ.)

Մի նմուշ էլ բերենք Նարեկացու այն-
չափ սիրած խառը ռոմանտիկներից, որոնց
մէջ իշխում են յամբ-անապետեան հինգ
ժանկանի անդամները.

Քանգի կամելով / ուժգինս ընթանալ / ընկ-
լայ սասկապես,

5 — 5 — 5

Յայնչափին ձգիլ՝ / իմոյն ոչ հասի,

5 — 5

Ի մեծագոյն ամբառնալ՝ / ասուստս զլորեցայ,

7 — 5

Երկնային ուղոյն՝ / անդնդոց մասնեցայ,

5 — 6

Ի զգուշանալն առաւել՝ / յուէս վնասեցայ...

7 — 5

(Բան ԾԵ. — Գ.)

Ի հարկէ, նարեկում պատահում են բազմաթիւ ուրիշ տեսակ կազմուած ոտանաւորներ էլ, բայց ոչ մի կասկած, որ քանադայի մարտի և զգացմունքների բուռն խոյանքներն ու մեծ բռնկումները իրենց ամենից յարմար ու թիմական-երաժշտական արտայայտութիւնը գտնում են հնգադանկ անդամներով հարուստ ոտանաւորներում, որոնք, նայած ներքին երաժշտականութեան պահանջին, լինում են երկանդամ, եռանդամ և քառանդամ:

Նարեկի երաժշտականութիւնն առանձնապէս ուժեղացնում են առողանութեան նշանները՝ երկարացման, չեշտերի, հարցականների, ըստ յուզական բովանդակութեան պահանջի՝ ամենաառատ զօրծածութիւնը: Նարեկացին ոտանաւորի չափերի բազմազանութեան հետ միասին ամենամեծ վարպետութեամբ օգտագործում է և բառերի ու նախադասութիւնների շարադասութեան տուած հնարաւորութիւնները: Ոտանաւորի մէջ բառերն ու նախադասութիւնները յաճախ մերթ կոչական, մերթ բացազանչական և մերթ հարցական են: Ու երբ ամբողջական հատուածներ բաղկացած են որեւիցէ այդպիսի նախադասութիւններից և փոխ ի փոխ յաջորդում են իրար, ստացւում է զարմանալի ակորդաւոր, չի յոգնեցնող, ընթերցողին միշտ էսթետիկական հաճոյքի մէջ պահող երաժշտական ութմի զգացում:

Եթէ բանաստեղծը ընկճուած հոգով թողութիւն է հայցում՝ ապա ոտանաւորում իշխում է երկարացման նշանը:

Մեղա՛յ երախեացդ մոռացութեան՝ վերսից մեղա՛յ,

Մեղա՛յ մարմնոյ ձեռն յոգի հարեալ՝ յիմարս մեղա՛յ...

(Բան ԻԷ. — Գ.)

Եթէ նա ի սպառ չի կորցրել յոյսը և

ապագայից ունի սպասելիք, ապա ոտանաւորում իշխում է հարցական նշանը:

Երէ՛ տեսի՞ց երբեք զամենախուր կերպարան հոգւոյս իմոյ ժպեցեալ:

Արդեօք լուս՞յց ընդ ձայնի գուժիս աւետեաց համբաւ ինձ առաքեցեալ:

(Բան ԻԵ. — Գ.)

Եթէ նա համակուած է փրկութիւն ձեռք բերելու իր պահանջով՝ ապա նրա ոտանաւորում իշխում է կոչական նշանը՝ չեշտը:

Խզեա՛ սուսերու յաղբական կեանքէն խաչիկ զցանցս վարմիս,

Որ յամենայն կայից պաշարեն ի մահ զգերիս, եւ հա՛ն ի յանդորր զոսս սասանեալ քիւր

ընթացողիս, Բժեկեա՛ զհրաւապ ջերմական տոհմումս

մղձկեալ սրիս...

(Բան Խ. — Գ.)

Բերում օրինակները միաժամանակ ցոյց են տալիս նարեկի երաժշտականութիւնն առաջացնող կողմերից ևս մի ուրիշը: Գա երբեմն երբեմն ոտանաւորի յանգաւորումն է: Նարեկացին սովորաբար գրում է անյանգ, և այդ համապատասխանում է տրամադրութիւնների արագ փոփոխութեան: անշուշտ յանգաւորումը այդպիսի ծաւալուն պոէմում կը խանգարէր զգացմունքների արագ ու անմիջական դրսևորմանը: Բայց երբ նա հոգեկան որոշ գրութիւններ ընդգծելու համար կուտակումներ է ստեղծում, կամ պատահում է, որ որոշ ժամանակ տուեալ տրամադրութիւնը յարատեւում է նրա մէջ, այդպիսի դէպքերում նա յանգաւորում է բանաստեղծութիւնը, զրանով ուժեղացնելով տողերի ու թիմական միութիւնը՝ որով բովանդակութեան միասնութեան ըմբռնումը հեշտացնում է: Յանգաւորման դէպքում նարեկացին գերադասում է բոլոր տողերի նոյնայանգ վերջաւորութիւնը: Բայց որովհետեւ շատ երկար չեն լինում յանգաւորուած հատուածները, զրա համար էլ նարեկում նոյնայանգութիւնը երբեք չի վերածւում բռնայանգութեան (ինչպէս պատահում է Մագրիստրոսի և Շնորհալու մօտ) և երբեք լսողութեան համար ձանձրալի չի դառնում:

(Շարունակելի՝ 13)

Մ. ՄԿՐԵԱՆ